ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՒՂՂՎՈՂ ՌՈՒՍԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Մոսկվայի և համայն Ռուսիո պատրիարք Ալեքսին և ռուսաց ուղղափառ եկեղեցու Սրբազան Սինոդը որոշեցին.

Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսին մասնակցելու համար գործուղել Սրբազան Սինոդի մշտական անդամ, Կրուտիցկու և Կոլոմնայի միտրոպոլիտ Նիկոլային և Աստվածհայտնության պատրիարքական մայր տաճարի ավագ քահանա Ն. Ֆ. Կոլչիցկուն)։*

(ՏԱՍՍ)

ՌՈՒՍԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ՄԵԿՆՈՒՄԸ ՓԱՐԻԶ

Ապրիլի 18-ին Մոսկվայից Փարիզ մեկնեց Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսին մասնակցելու համար ռուսաց ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչ, Սրբազան Սինոդի մշտական անդամ, Կրուտիցկու և Կոլոմնայի միտրոպոլիտ Նիկոլայը։

Վնուկովոյի օդանավակայանում Կրուտիցկու և Կոլոմնայի միտրոպոլիտ Նիկոլային ուղեկցում էին ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Ռուսաց ուղղափառ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Կ. Բելիշևը և Մոսկվայի պատրիարքարանի ներկայացուցիչ, Աստուածհայտնության պատրիարքական մայր տաճարի ավագ քահանա Ն. Ֆ. Կոլչիցկին։

(ՏԱՍՍ)

ՌՈՒՍԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՆԻԿՈԼԱՅԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՓԱՐԻԶ

ՓԱՐԻԶ, 18 ապրիլի (ՏԱՍՍ).—Այսօր Փարիզ ժամանեց Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի աշխատանքին մասնակցելու համար ռուսաց ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչ, Սրբազան Սինոդի մշտական անդամ, Կրուտիցկու և Կոլոմնայի միտրոպոլիտ Նիկոլայը։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄՆԱՅԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՆԻԿՈԼԱՅԻ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՁԱՌԸ

ՓԱՐԻԶ, 22 ապրիլի (ՏԱՍՍ).— Ռուսաց ուղղափառ եկեղեցու պատվիրակ, Կրուտիցկու և Կոլոմնայի միտրոպոլիտ Նիկոլայը, հանդես գալով Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսում, հայտարարեց.

—Ռուսաց ուղղափառ եկեղեցին, հանձինս իր պետի՝ Մոսկվայի և համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիի, «Խաղաղության պաշտպանության կոչ»-ում արտահայտած իր օրհնությունն է արել նոր պատերազմական մրրկի դեմ աշխարհի բոլոր կողմերում հնչող բողոքի և երկրի վրա խաղաղության հաստատման հա-

---

*) *Ինչպես հայտնի է, ֆրանսիական կառավարությունը Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսին մասնակցելու համար գործուղված ներկայացուցիչների մի մասին մերժել է վիզա տալ, դրա հետևանքով էլ Ռուսաց ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչներից կոնգրեսին մասնակցել է միայն Սրբազան Սինոդի մշտական անդամ, Կրուտիցկու և Կոլոմնայի միտրոպոլիտ Նիկոլայը։*

ԽՄԲ.

մար բոլոր մաքառողների միացման առթիվ։

Հիմա մենք, ռուսաց ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչներս, խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսի առաջ ուզում ենք ասել, որ մեր ռուս ժողովուրդը պատերազմ չի ցանկանում, որ նա ոչ որի վրա հարձակվել չի ուզում, որ նա ատում է պատերազմի մասին մտածելն անգամ, որ նա ամբողջապես զբաղված է իր խաղաղ աշխատանքով, իր երջանկության ու իր հայրենիքի ծաղկման հոգսերով։

Ես, որպես գերմանո-ֆաշիստական զավթիչների և նրանց գործակիցների վերջին պատերազմի ընթացքում կատարած ոճրագործությունների հետաքննման ու հաստատման Պետական արտակարգ հանձնաժողովի անդամ, եղել եմ մեր երկրի շատ շրջաններում, ֆաշիստական ժամանակավոր բռնագրավումից նրանց ազատագրվելուց անմիջապես հետո։ Այդ վայրերում ես ականատես եմ եղել աննկարագրելի եղեռների, որ կատարել են XX դարի բարբարոսները։ Ավերված քաղաքներ, տաճարներ, դպրոցներ, հիվանդանոցներ, ապաստարաններ, հազարավոր, տասնյակ ու հարյուր հազարավոր ոճրագործորեն սպանված մարդիկ—իսկական արյան ծով ու արցունքների օվկիանոս,—ահա՛ ինչ էր բացվում յուրաքանչյուրի աչքերի առաջ, ով ոտք էր դնում թշնամուց մաքրված հողի վրա։

Մեզնից ո՞վ է մոռացել այդ մասին։

Եվ ահա, երբ դեռ ևս Ռուսաստանի ու Արևմտյան Եվրոպայի քաղաքներում երևում են ածխացած ավերակները, երբ դեռ ևս այրիացած կանայք սգում են իրենց սպանված ամուսինների մահը ու մայրերը տղբում անհայտ կորած որդիների համար՝ գաղտուկ հույս դնելով նրանց վերադարձի հրաշքի վրա, անդին արդեն նոր գերեզմանափորները բորբոքում են ծխում, մռայլ ջահերի կրակը։

Մեզնից ո՞մը չի սարսեցնում համաշխարհային տիրապետության ձգտող նոր թեկնածուների տենչը՝ կրկնելու առավել քան սարսափելի արշավանքը խաղաղասեր դեմոկրատական ժողովուրդների դեմ, արշավանք, որի վախճանը պիտի լինին մարդկության նորանոր, ծանրագույն տառապանքները։

Նոր պատերազմի հրձիգներից շատերը իրենց համարում և կոչում են քրիստոնյաներ։ Մենք, ուղղափառ եկեղեցու պաշտոնյաներս, զարմացմամբ ենք դիտում շարությունն և սատանայական ատելության արտահայտությունները՝ մեզ համար սուրբ, քրիստոնեական, ավետարանական նշանաբաններով սքողելու այդ փորձերը։

Մենք, ռուսաց ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչներս, բախտ ունեցանք տեսնելու ներկա կոնգրեսի նախապատրաստության ժամանակաշրջանում և այժմ էլ խորը գոհունակությամբ տեսնում ենք այստեղ, թե որքան մեծ են աշխարհում խաղաղության ուժերը, որքան ջերմ է մարդկանց ձգտումը ապրելու ստեղծագործ խաղաղ աշխատանքով, բարի դրացիության, սրտակից միաբանության մեջ և որքան խորն է նրանց նողկանքը բռնության, ստրկացման ու ամեն մի չարիքի հանդեպ։ Եվ սա— օրգանական, անհողդողդ ու ծավալուն երևույթ է։ Նոր կյանքը անողոք քայլվածքով գալիս է փոխարինելու հին, իր մեջ չարության ու ատելության թույնը կրող, նեխված աշխարհին։ Այդ հոսանքին, հնարավոր է, և կարելի է առանձին տեղամասերում արգելք հանդիսանալ, բայց աշխարհում և ո՛չ մի ուժ ի վիճակի չէ նրան կանգնեցնելու։

Եվ այժմ, երբ հարյուրավոր միլիոն մարդիկ բացարձակ կերպով ասել են իրենց երկրներում և, հանձինս իրենց ներկայացուցիչների, ասում են այստեղ, «չի՛ք» պատերազմին ու նրա հրահրողներին, ռուսաց ուղղափառ եկեղեցին ամբողջ հոգով իր ձայնը միացնում է խաղաղության ձգտող կամքի այդ ցույցին և աղոթում է ներկա մեր նախաձեռնության հաջողության համար։